«Երևանի Լեոյի անվան N65 ավագ դպրոց»

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Նախագծային աշխատանքը տարրական դասարաններում

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Հարությունյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1.

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

1.1. Ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դպրոցում.....4

1.2. Նախագծային աշխատանքի առանձնահատկությունները և կիրառումը որպես աշակերտակենտրոն ուսուցման նախապայման.....7

ԳԼՈՒԽ 2.

2.1. Դասավանդման իմ փորձից.....,,..16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....26

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....27

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ ժամանակների առաջադրած պահանջներին համարժեք փոփոխության են ենթարկվում հասարակական կյանքի բոլոր ոլորտները, այդ թվում՝ կրթական ոլորտը: 21-րդ դարի հրամայականով կրթական հաստատություններում լուրջ տեղաշարժեր են գրանցվում: Տարրական դպրոցում էլ, մասնավորապես մայրենիի ուսուցման մեթոդիկայում մեկը մյուսին փոխարինելու են եկել մանկավարժահոգեբանական հիմնավորում ունեցող տարբեր մեթոդներ և միջոցներ, որոնք տարեցտարի նորացվում են, փոփոխվում. նոր տեխնոլոգիաների առաջացմամբ և կատարելագործմամբ պայմանավորված՝ ձևավորվում են նորագույն մեթոդներ, որոնց շնորհիվ էլ ավելի է բարձրանում դասավանդման արդյունավետությունը, ապահովվում գիտության առաջընթացը:

Աշխատանքի հիմնական նպատակը «Մայրենի 3» դասագրքի «Ժողովուրդը իմաստուն է» թեմատիկ խմբի ուսումնասիրումն է նախագծային գործունեության ճանապարհով՝ բացահայտելու համար, թե ընդգրկված բանահյուսության նյութերի ուսումնասիրությունը՝ նախագծային ուսուցման մեթոդով, որքանո՛վ է նպատակահարմար ու արդյունավետ մատաղ սերնդի արժեհամակարգի ձևավորման ու դաստիարակման, վերլուծական մտքի զարգացման, աշխարհայացքի, բարոյական, հայրենասիրական արժեքների ձևավորման հարցում

ԳԼՈՒԽ 1.

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

1.1.Ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դպրոցում

Կրթության հարցը մշտապես եղել և մնում է մարդկությանը հուզող խնդիրներից մեկը: Վերջին շրջանում իրականացվող կրթական բարեփոխումների շնորհիվ այսօր հաստատվում և կյանքի է կոչվում Հայաստանի Հանրապետության նոր կրթակարգը, որի հիմնական նպատակներից են որակյալ կրթության ապահովումն ու հասանելիությունը հասարակության բոլոր շերտերում:

Տարրական դպրոցը դառնում է այն կարևոր օղակը, որտեղ դրվում է հիմքը ազատ, կրթված, զարգացած անձի ստեղծման ու ձևավորման համար: Այս առումով տարրական դպրոցում մեծ տեղ է տրվում մայրենի լեզվի՝ որպես աճող սերնդի կրթության ու դաստիարակության կարևոր միջոցի ուսուցմանը: «Տարրական դասարաններում մայրենի լեզուն ոչ միայն ուսուցման նպատակ է, այլև միջոց. նրանով են ուսուցանվում դպրոցում ավանդվող մյուս բոլոր առարկաները, նա այն բանալին է, որով բացվում են բոլոր գիտությունների դռները»[1]:

Ուսումնառության առաջին օրերից պետք է այնպես անել, որ երեխան դառնա ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցը: Այդ պատճառով գործնական աշխատելուն նախապատրաստել դեռ պետք է սկսենք առաջին դասարանից: Այս փուլում գործնական աշխատանքները պետք է կրեն ուսուցողական բնույթ. հիմնականում պետք է զարգացնենք երեխաների երևակայությունը, ստեղծագործական միտքը, դիտարկումներ անելու և հարցեր տալու, որն էլ կնպաստի գործնական աշխատանքներ կատարելու կարողությունների զարգացմանը:

[1] Ռ. Խարազյան, Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում, Եր., «Ասողիկ», 2003, էջ 4:

II-IV դասարաններում արդեն կարելի է տալ գործնական վարժություններ՝ գործնական առաջադրանքներով: Գործնական աշխատանքի ժամանակ են ստեղծվում երեխաների համար ոչ սովորական իրավիճակներ, որտեղ պետք է հնարամտություն, ստեղծագործական մոտեցում ցուցաբերեն այդ խնդրի լուծման համար: Հարկ է նշել, որ այդ առաջադրանքները պետք է բխեն ուսումնական նյութից: Այդ դասարաններում գործնական աշխատանքները դպրոցականների մոտ զարգացնում են մտածողական գործընթացներից՝

- դասակարգումը,
- ամփոփումը,
- տարբեր որոշումների ընտրությունը,
- գործողությունների ծրագրի կազմումը,
- միևնույն երևույթը տարբեր տեսանկյուններից դիտարկումը,
- ինքնաստուգումը,
- ինքնագնահատումը:

Մայրենիի դասագործընթացի հետաքրքրության ապահովումը բարձրացնում է դասի արդյունավետությունը, ինչի շնորհիվ մենք հասնում ենք մեր առջև դրված խնդիրների լուծմանը: Դասի հետաքրքրությունն իր հերթին կախված է ուսուցչի ընտրած մեթոդներից, դասի կազմակերպման ձևից, ինչը ենթադրում է աշակերտների ակտիվ մասնակցությունը դասին: Ուսուցման մեթոդները ժամանակ առ ժամանակ փոխվում են. կրթական ոլորտում ի հայտ եկող փոփոխություններով պայմանավորված՝ ներդրվում է նոր մեթոդների համակարգ, որի կիրառությունը դառնում է անհրաժեշտություն:

Մայրենիի դասընթացի շրջանակներում կիրառվում են բազմաթիվ մեթոդներ, որոնց նպատակներն ու կիրառման արդյունավետությունը տարբեր են: Նորագույն տեխնոլոգիաների կիրառումը խթանում է աշակերտների ստեղծագործական կարողությունները, ինչպես նաև զինում հետազոտական աշխատանք կատարելու հմտությամբ: Նախագծային մեթոդը առանձնահատուկ տեղ է գրավում, որի հիմնա-

կան նպատակն է սովորողներին հնարավորություն տալ ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու տարբեր առարկաների ինտեգրման միջոցով:

Նորագույն մեթոդների ստեղծմանը նպաստում են նաև տեղեկատվական տեխնոլոգիաների առաջացումը, կատարելագործումը և դասագործընթացին այդ տեխնոլոգիաների կիրառումը: Ներկայումս ժամանակակից դպրոցի ուսուցչին տրվող պահանջները մեծացել են: Այժմ ուսուցչակենտրոն ուսուցմանը փոխարինելու է եկել մի նոր՝ աշակերտակենտրոն ուսուցում, որը նախորդից տարբերվում է նրանով, որ այժմ ուսուցչի մասնակցությունը դասագործընթացին պետք է լինի հնարավորին չափ քիչ. նա միայն պետք է ուղղորդի և փորձի այնպիսի հարցեր առաջադրել, որոնց միջոցով երեխաները ինքնուրույն «կբացահայտեն» այն հարցը, խնդիրը, որը պահանջվում էր և խթան կհանդիսանա նրանց ինքնուրույնությանը: Ինչպես գիտենք, որքան շատ մեթոդներ է դասագործընթացին կիրառվում, այնքան դասն ավելի արդյունավետ է լինում, իսկ արդյունքը՝ ակնհայտ, սակայն չպետք է մոռանալ, որ տարրական դպրոցը միայն գիտելիքներ ձեռք բերելու օղակ չէ. այս փուլում նաև կատարվում է անձի զարգացում, ուստի ուսուցումը կազմակերպելիս պետք է հաշվի առնել, որ նյութը համապատասխանի տարրական դպրոցի երեխաների կարիքներին, նրանց կողմից յուրացման ձևերին, այդ ձևերի յուրացման արդյունավետությանը, այդ ամենը ուսումնական հետագա գործընթացում կիրառելու անհրաժեշտությանը: Ուստի այս խնդիրների իրականացումն էլ պահանջում է, որ ուսուցման բովանդակությունը պետք է կառուցել այնպես, որ այն համապատասխանեցվի տարրական դպրոցում սովորողների՝ ինչպես ստեղծագործական, այնպես էլ մտավոր գործունեություն ծավալելու կարողությունների նպատակներին՝ չմոռանալով հաշվի առնել ուսուցման կազմակերպման մի շարք սկզբունքներ, որոնցից են մատչելիության, զննականության, պարզից դեպի բարդը անցնելու, հաջորդականության, ծանոթից դեպի անծանոթը գնալու և անհատականության սկզբունքները: Ուրեմն պետք է իմանալ, որ «տարրական դպրոցի հիմնական նպատակը սովորողի մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումն է: Տարրական դպրոցն ապահովում է ուսում-

նառության անհրաժեշտ պայմաններ և միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող մակարդակ»[2]:

Հարկ է նշել այն փաստը, որ յուրաքանչյուր մեթոդ ընտրելիս պետք է հաշվի առնել երեխաների տարիքային առանձնահատկությունները, որոնք ուղեկցվում են տարաբնույթ փոփոխությամբ: Հոգեկան գործընթացների զարգացման համար անհրաժեշտ է փոխել կրտսեր դպրոցականների գործունեության ձևերը: Մեթոդներ ընտրելիս չպետք է մոռանալ, որ հոգեկան գործընթացներից հատկապես պետք է ուշադրություն դարձնել մտածողությանը, ուշադրությանը և հիշողության առանձնահատկություններին, նրանց մանկական հետաքրքրությունները և պահանջմունքները բավարարելուն: Երեխաներին դեռ փոքր հասակից պետք է սովորեցնել ինքնուրույն հետազոտություններ կատարել: Այդ պատճառով էլ պետք է կարողանանք մեթոդներից, հնարներից ընտրել այնպիսի մեթոդներ, որոնք դպրոցականներին ինքնաբերաբար կներգրավեն հետազոտական գործընթացի մեջ: Այս նպատակով որքան շատ նպատակաուղղված և հնարավորին չափ շատ մեթոդներ կիրառենք դասի ընթացքում, այնքան շատ աշակերտներ կմասնակցեն դասին:

Շատ մեթոդների կիրառումը, անշուշտ, նպաստում է դասի հետաքրքրությունների բարձրացմանը, ինչպես նաև խթանում հետազոտական կարողությունների ձևավորումը, բայց շատ մեթոդների ընտրությունը պետք է հիմնավորված լինի և նպատակային, այլապես ոչ միայն արդյունավետ չի լինի դրանց կիրառումը, այլ նաև կխանգարի դասի նպատակների իրականացմանը:

1.2. Նախագծային աշխատանքի առանձնահատկությունները և կիրառումը որպես աշակերտակենտրոն ուսուցման նախապայման

Ուսումնական նախագիծը կամ նախագծային ուսուցման մեթոդը ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է սովորողների միջև, որոնք ունեն մեկ ընդհանուր նպատակ և միջոցներ,

[2] Հանրակրթության պետական կրթակարգ, Ե., Անտարես, 2004, էջ 9:

որոնք ուղղված են որևէ խնդրի լուծմանը կամ որոշակի ձևակերպմանը: Մեթոդի կիրառման վերջնարդյունքում պետք է ունենանք որոշակի շոշափելի արդյունք:

Այս մեթոդի կիրառման ժամանակ սովորողները պետք է ունենան գործողությունների քայլաշար, հաջորդականություն, հնարների համադրություն, որոնք անհրաժեշտ են առաջադրված նպատակին հասնելու համար: Այս մեթոդը համարվում է հետազոտական, պրոբլեմային ստեղծագործական մեթոդների համադրություն: Մեթոդի կիրառման ժամանակ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողների ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական դաշտում ինքնուրույն կողմնորոշվելու ստեղծագործական և քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը: Աշակերտների դերը նախագծային աշխատանքում էապես տարբերվում է. նրանք պասիվ լսողից դառնում են ակտիվ մասնակից, հետազոտող, գործունեություն ծավալող: Նրանք ազատ են գործունեության ձևի ու տեսակի ընտրության մեջ:

Նախագծային մեթոդի հիմնական արժեքն այն է, որ այն աշակերտներին ուղղորդում է ոչ թե որոշակի թեմայի պարզ ուսումնասիրության, այլ կրթական արդյունք ստեղծելու գործընթացի:

Նախագծային մեթոդի հիմնական ձևակերպումը հետևյալն է. «Գիտեմ, թե ինչի համար է ինձ պետք այն, ինչ ես սովորում եմ, որտեղ և ինչպես կարող եմ գործածել» [3]:

Մեր օրերում կրթական համակարգում առավել կարևոր են կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողության և հետազոտական կարողությունների ձևավորումը և զարգացումը: Մեր նպատակն է ունենալ այնպիսի պաշար, որի կիրառման արդյունքում ունենանք դասավանդման բարձր որակ: Այս նպատակին հասնելու համար կան շատ մեթոդներ, որոնցից կառանձնացնենք նախագծի մեթոդը: Նախագծային գործունեության ժամանակ նշանակալի արդյունք ստանալու

[3] Նույն տեղում:

համար պետք է կատարենք նպատակաուղղված և ճիշտ պլանավորած աշխատանք: Կարելի է ասել, որ «նախագծային գործունեությունը որոշակի քայլերի շարք է, որը սկսվում է մարդու առջև դրված իրական խնդրի առաջքաշումով և վերջանում որոշակի արդյունքի ստացումով, ընդ որում՝ այն արդյունքի, որը նախապես պլանավորված է նախագծային գործունեություն իրականացնելու սկզբում»[4]:

Նախագծային մեթոդը անհատական կամ խմբային աշխատանք է, որի իրագործման համար որոշակի ժամանակահատված է պահանջվում: Նախագծային մեթոդի իրականացման ժամանակ կարևորվում են միջառարկայական կապը և համագործակցությունը, բացի այդ նաև այս մեթոդը լուծում է մի շարք կրթական, զարգացնող, դաստիարակչական խնդիրներ: Այս մեթոդի կիրառումը դասագործընթացին զարգացնում է սովորողների հետազոտական, որոնողական, համադրական, ստեղծագործական կարողությունները, ձևավորում է անձնային որակներ: Սկզբնական շրջանում դժվար էր այս մեթոդի կիրառումը պատկերացնել տարրական դասարաններում, մանավանդ այն դեպքում երբ «աշակերտը ինքն էր լինելու նախաձեռնողը, ինքը՝ որոնողը, ուսումնասիրողը, իսկ վերջում էլ եզրահանգումներ կատարողը»[5]: Այդ դեպքում դժվար էր պատկերացնել թե ինչպես պետք է ուղղորդենք աշակերտներին ինքնուրույն հետազոտություններ կատարելուն: Կարելի է ասել նաև, որ այս մեթոդով աշխատող ուսուցիչը բարձր որակավորում ունեցող մասնագետ է և հմուտ մանկավարժ:

Մեթոդի գաղափարն այն է, որ սովորողի կողմից իրականացվող ուսուցումը պետք է հիմնված լինի այն սկզբունքի վրա, որ ամեն ինչ կյանքից է, և ամեն ինչ կյանքի համար է: Նախագծային մեթոդի հիմնական արժեքն այն է, որ այն աշակերտներին ուղղորդում է ոչ թե որոշակի թեմայի պարզ ուսումնասիրության, այլ կրթական արդյունք ստեղծելու գործընթացին: Նրանք ուրախությամբ և հեշտությամբ կսովորեն այն, ինչը նրանց անձամբ հետաքրքրում է, երբ ուսուցման բովանդակությունը կգա իրենց իրական կյանքից. նման գործունեության արդյունքը ան-

[4] Կ. Թորսյան, Կ. Չիբուխչյան, Գործնական աշխատանքներ մայրենիից, Երևան, Զանգակ, 2012, էջ 17-18:
[5] Գիտամեթոդական հանդես, Նախաշավիղ, 4, Երևան, 2015, էջ 21:

պայման կկիրառվի:[6] Այս մեթոդով հնարավորություն ենք տալիս աշակերտներին բացահայտելու իրենց մեջ եղած ստեղծագործական ներուժը:

Նախագծային մեթոդը ենթադրում է համագործակցություն աշակերտների միջև, ունի մի շարք առավելություններ. այն մեծապես նպաստում է աշակերտների զարգացմանը: Այս մեթոդի կիրառման արդյունքում աշակերտները նոր փորձ են ձեռք բերում, որոնք հետագայում նպաստում են ինքնուրույն մտածողության զարգացմանը: Նախագծային աշխատանքներում կարևորվում են աշակերտների անմիջական մասնակցությամբ հետազոտական-որոնողական, պրոբլեմային և ստեղծագործական մեթոդների համալիրի մշակումը, ընտրությունն ու կիրառումը նախագծային գործունեության և առաջադրված խնդիրների լուծմանը միտված աշխատանքներում: «Ուսումնական գործընթացի արդյունավետությունը ոչ այնքան ուսուցման բովանդակության, որքան այդ բովանդակության յուրացման ձևերի, այդ գործընթացում աշակերտների գործունեության եղանակների մեջ է, որոնք ընտրում է ուսուցիչը դասը կազմակերպելիս»[7]:

Նախագծային գործունեությունը զարգացնում է կրտսեր դպրոցականների ճանաչողական և ստեղծագործական գործունեություն ծավալելու ձգտումը, ինքնուրույն արդյունքների ձեռքբերումը: Այդ ընթացքում աշակերտները ինքնուրույն սովորում են մտածել, ուսումնական տեղեկատվությունն «ընդունել» ոչ թե անվերապահորեն՝ առանց քննարկելու, այլ խնդիրների լուծմանը հասնում են մտածելու, պրպտելու, որոնումների ճանապարհով: Հաճախ բովանդակությունը դպրոցականներին հայտնի է լինում տարբեր առարկաներից, զանազան աղբյուրներից, սակայն երբ հիմնախնդիրը նրանց ներկայացվում է անհայտներով, նրանք դրանք լուծելու համար ծավալում են ինքնուրույն որոնողական-մտածական գործունեություն: Հետազոտություն կատարելու կարողությունը պետք է զարգացնել՝ կրտսեր դպրոցական տարիքից սկսած, տարաբնույթ տեղեկությունների հավաքումը, դասակարգումը, գլխավորի և երկրորդականի զանազանումը հետազոտական աշխա-

---

[6] http://открытыйурок.рф/статьи/662693/

[7] Ջ. Գյուլամիրյան., Նախագծային գործունեությունը՝ որպես ապագա դասվարների մանկավարժական հաղորդակցական կարողության զարգացման միջոց. Մանկավարժական միտք, թիվ 1,2, Երևան, 2009:

տանք կատարելուն է նպաստում, իսկ այդ հնարավորությունը մեզ տալիս է նախագծային ուսուցման մեթոդը: Սկսած առաջին դասարանից՝ մենք պետք է աշակերտներին սովորեցնենք համագործակցել միմյանց հետ, սկզբից զույգերով, ապա աստիճանաբար մեծացնել աշակերտների թիվը: Երկրորդ դասարանում պետք է ամրապնդել համագործակցելու կարողության ձևավորումը, հետազոտական աշխատանք կատարելը դարձնել դասերի անբաժան մասը: Խմբերում համագործակցելով՝ աշակերտները կարողանում են հաշվի նստել ընկերների կարծիքների հետ, ձեռք բերել նոր գիտելիքներ, դրանք կիրառելով՝ հետազոտություններ իրականացնել:

Նախագծային ուսուցման մեթոդը այն մեթոդների թվին է պատկանում, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս ոչ միայն սերտել դասանյութը, այլ նաև զարգացնում են բարոյական մի շարք որակներ: Տարրական դասարաններում նախագծային աշխատանքների ձևով ուսուցման գործընթացի կազմակերպումը արդյունավետ է նաև միջանձնային հատկանիշների դրսևորման առումով, քանի որ այն խթանում է կոլեկտիվ աշխատանքը, մտքեր, տեղեկատվություն փոխանակելու հնարավորություն տալիս և փոխօգնություն դրսևորելու, միմյանց կարծիքը լսելու, քննարկելու կարողություն, ինքնագնահատման ու ինքնադրսևորման հմտություններ ձևավորում: Աշակերտների անմիջական մասնակցությամբ նախագծային աշխատանքների մշակումն ու իրականացումը խթանում են նրանց համագործակցային կարողությունների զարգացումը, ապահովում ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ համագործակցությունը՝ դառնալով կառուցողական և համագործակցային ուսուցման առանցքը: Նախագծային գործունեության հանձնարարականների բնույթին և ծավալին համապատասխան ստեղծվում են աշխատանքային խմբեր: Յուրաքանչյուր աշխատանքային խումբ պիտի որոշի, թե՝

- Ի՞նչ պիտի անի:
- Ե՞րբ (գործողությունների հաջորդականության իմաստով) պիտի անի:
- Ինչո՞ւ պիտի այդպիսի փուլայնությամբ իրականացնի:
- Ինչպե՞ս պիտի անի:

Ապա պետք է որոշի՝

- աղբյուրները,
- քայլերը,
- միջոցները և այլն:

Նախագծային ուսուցումը իրականացնելիս մենք պետք է հատկապես ուշադրություն դարձնենք քայլերի հաջորդականությունը, որովհետև որևէ օղակի բացթողումը կհանգեցնի վատ, թերի արդյունքի: Նախագծային ուսուցման իրականացման փուլերն են՝

- նախագծի թեմայի ընտրություն,
- հիմնահարցի ձևակերպում,
- աշխատանքային խմբի ձևավորում,
- աշխատանքի բաժանում,
- տեղեկությունների հավաքում,
- ստացված տեղեկությունների քննարկում, մշակում (նախօրոք որոշվում է ներկայացման ձևը՝ տեսանյութ, ֆոտոշարք, հոդված),
- ստացված արդյունքի եզրահանգումների ձևակերպում,
- կատարված աշխատանքների արդյունքների ներկայացում,
- արտաքին գնահատում, վերլուծություն, ամփոփում:

Նախագծային մեթոդի ուսուցման հիմք կարելի է ընդունել սովորողի ակտիվ գործունեությունը՝ հաշվի առնելով աշակերտների անձնական հետաքրքրությունները տվյալ թեմայի շուրջ: Այդ մոտեցումը առավել նպատակային է կիրառել տարրական դասարաններում՝ աշակերտների՝ փնտրելու, պրպտելու ջիղը զարգացնելու նպատակն ունենալով: Կարևոր նշանակություն ունի նաև այն, որ սովորողներին առաջարկենք իրական կյանքից վերցնել խնդիրներ, որոնք կարևոր են իրենց համար: Այդ ամենի շնորհիվ կրտսեր դպրոցականները կսկսեն մտածել և առանձնացնել իրենց շրջապատում կարևոր և անկարևոր երևույթները՝ ձևավորելով հետաքրքրությունների հստակ շրջանակ:

Այդ խնդիրների լուծման համար սովորողին անհրաժեշտ կլինի կիրառել ինչպես իր՝ վաղօրոք ունեցած գիտելիքները, այնպես էլ նոր գիտելիքներ, որոնք նա ձեռք կբերի այդ աշխատանքի կատարման ընթացքում:

Նախագծային աշխատանքում սովորողի դերը էապես տարբերվում է. այս փուլում նրանք պասիվ լսողից դառնում են ակտիվ մասնակից, հետազոտող, գործունեություն ծավալող: Նրանք ազատ են գործունեության ձևի ու տեսակի ընտրության մեջ: Տարրական դասարանում սովորողի համար այս մեթոդը անհատական առանձնահատկություններ բացահայտելու լավագույն խթան է:

Նախագծային մեթոդի առանձնահատկություններից մեկն էլ աշխատանքի նախնական պլանավորումն է: Սկսած ծագած խնդրից մինչև նախագծի նպատակը՝ անհրաժեշտ է բաժանել առանձին փուլերի՝ յուրաքանչյուրի համար իրենց ժամանակավոր խնդիրներով, պարզել այդ խնդիրների լուծման միջոցները գտնելու ուղիներ, աշխատանքի համար մանրամասն աղյուսակ կազմել, որտեղ նշված լինի յուրաքանչյուր փուլի իրականացման ժամանակը: Նախագծային աշխատանքի պլանի իրականացումը կապված է գրականության և տեղեկատվության այլ աղբյուրների ուսումնասիրության հետ, ինչպես նաև այդ տեղեկատվության ընտրության հետ:

Նախագիծը պարտադիր պետք է ունենա նաև գրված մաս՝ հաշվետվություն աշխատանքի ընթացքի մասին, որտեղ նկարագրված են աշխատանքի բոլոր փուլերը, նրանց վրա հիմնված որոշումները, առաջացած խնդիրները, դրանց հաղթահարման միջոցները, վերլուծվում են հավաքված տեղեկատվությունը, գիտափորձերի անցկացումը և դիտումը, արվում են եզրակացություններ, պարզաբանվում են նախագծի հեռանկարները:

Այսպիսով կարելի է ասել, որ ուսումնական նախագիծը ուսուցչի կողմից կազմակերպված և աշակերտների կողմից իրականացվող գործողությունների ամբողջությունն է: Ուսուցչի դերը նախագծի իրականացման տարբեր փուլերում կարող է փոխվել: Բոլոր փուլերում էլ նա պետք է հանդես գա որպես խորհրդատու, օգնական, ապահովի սովորողի ինքնագործունեությունը, այսինքն՝ խորհուրդներ տա, հետևի ընթացքին, ուղղորդի: Ուսումնական նախագիծը զարգացման ինտեգրված դիդակտիկ միջոց է, ուսուցում և դաստիարակում, որը թույլ է տալիս

զարգացնել նախագծային հատուկ կարողություններ ու հմտություններ՝ խնդրի առաջադրում, նպատակամղվածություն, իրականացվելիք պլաններ, վերլուծություն, ինքնաներկայացում, ինչպես նաև տեղեկատվության որոնում, ինքնակրթություն, հետազոտական և ստեղծագործական գործունեություն:

Ուսուցչի դերը նախագծային մեթոդը կիրառելիս անգնահատելի է հատկապես տարրական դասարանում. տարրական դասարանի աշակերտները դեռևս չեն տիրապետում անհրաժեշտ այն կարողություններին, որոնց միջոցով իրականացվում է լիարժեք ուսումնական նախագիծ: Տարրական դասարանների առնչությամբ անհրաժեշտ է շեշտը դնել նախագծային գործունեության տարրերի վրա: Նախագիծը պարտադիր պետք է ունենա պարզ, իրականացվելիք, հասանելիք նպատակ: Տարրական դասարաններում այն պետք է ունենա տարիքային առանձնահատկությանը բնորոշ հետաքրքրության որոշակի շրջանակ, այսինքն՝ չպետք է մոռանանք կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները:

3-4-րդ դասարաններում կազմակերպվող նախագծային գործունեության առանձնահատկությունն այն է, որ դրանք անհատական, զույգերով, խմբային, կոլեկտիվ խմբային առաջադրանքներ են, որոնք դպրոցին հնարավորություն են տալիս դասի ընթացքում կատարվող ուսումնական գործունեությունից անհատապես անցում կատարել զարգացման արդիական փուլից դեպի զարգացման մերձավոր գոտի: Խմբերից յուրաքանչյուրը կարող է աշխատել նախագծային աշխատանքի որևէ մասի, որևէ հարցի, կամ խնդրի շուրջ: Տարրական դասարաններում նախագծային գործունեություն կիրառելիս պետք է հաշվի առնել նաև նրանց տարիքային առանձնահատկությունները, այդ պատճառով թեմաներ ընտրելիս պետք է ընտրել ուսումնական առարկաների բովանդակությունից: Նախագծային մեթոդով աշխատելիս չպետք է մոռանանք փուլերի հաջորդականության մասին[8]

1.Նախապատրաստական փուլ. կազմակերպական աշխատանք

- Աշխատանքի պլանավորում. այս փուլի ժամանակ պետք է որոշենք, թե խմբի յուրաքանչյուր անդամ ինչո՛վ պետք է զբաղվի:

[8] Լ.Ասատրյան, Գ. Հակոբյան, Ա.Ասատրյան, Մ.Գևորգյան, Ն.Կարապետյան, Ա. Բաղդասարյան, Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017, էջ 164:

- Գնահատման չափանիշների մշակում. որոշենք, թե ինչպե՛ս պետք է գնահատենք աշխատանքը:

2. Ուսումնական փուլ

- ծանոթացում գնահատման չափանիշներին,
- ծանոթացում աշխատանքային նյութերին,
- ինքնուրույն հետազոտական աշխատանք. յուրաքանչյուր խումբ կատարում է իր աշխատանքը.
- գնահատում:

3.Եզրափակիչ փուլ՝

- Արդյունքների ներկայացում. աշակերտները ներկայացնում են իրենց համատեղ աշխատանքից ստեղծված արդյունքը,
- Ներկայացման գնահատում. աշակերտները, լսելով իրենց ընկերների ներկայացումը, կատարում են գնահատում,
- Կազմակերպական աշխատանք:

Բնականաբար, նախագծային ուսուցման ժամանակ ոչ բոլոր աշակերտները կարող են հետազոտել, քանի որ ունեն տարբեր կարողություններ, բայց նրանցից յուրաքանչյուրը կարող ենք ընդգրկվել դասապրոցեսի մեջ՝ տարբեր կարծիքներ հնչեցնելու, ստացած գիտելիքների յուրօրինակ մեկնաբանմամբ: Սովորաբար թույլ ունակություններ ունեցող աշակերտները վախենում են նախագծում ներդրումներ անելուց, սեփական մտքեր արտահայտելուց, բայց, տեսնելով ակտիվ մասնակիցներին, ձգտում են հմտացնել իրենց կարողություններ:

ԳԼՈՒԽ 2

2.1. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԻՄ ՓՈՐՁԻՑ

Նախագծային մեթոդով կրտսեր դպրոցականների համագործակցային կարողությունների, ինչպես նաև վերլուծելու, համադրելու և հակադրելու հմտությունների զարգացման փորձից

Առարկա - Մայրենի:

Դասարան - 3-րդ:

Դասագիրք – «Մայրենի 3», 2014 (հեղ.՝ Վ. Սարգսյան, Հ. Խաչատրյան, Կ. Թորոսյան, Ե. Ջիլավյան)

Թեմատիկ խումբ – « Ժողովուրդ իմաստուն է»

Դասի տեսակը – Ամփոփման դաս

Դասի տևողությունը- 90 րոպե

Դասը վարում եմ ԽԻԿ համակարգով

Դասի ընթացքում կիրառվող մեթոդները և իրականացման եղանակները՝

- հարցազրույց,
- «մտագրոհ»,
- «ցուցադրություն պատկերասրահում»,
- «այցելություն պատկերասրահում»,
- «քառաբաժան», խմբային աշխատանք:

Անհրաժեշտ նյութեր՝

- պաստառներ,
- ծրարներ՝ լցված թերթիկներով, որոնց վրա գրված են գոյականներ և հոգնակիակերտ վերջավորություններ
- քարտեր, որոնց վրա դրված են հատուկ և հասարակ գոյականներ,
- դարձվածքներով քարտեր,

- պարաններ,
- ամրակներ,
- կպչուն թղթեր։

Դասի նպատակները և խնդիրները

Ուսումնական՝

- Գոյականի մասին ունեցած գիտելիքների ամրակայում։
- Արտահայտիչ կարդալու, կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորում։
- Տեքստը բանավոր վերարտադրելու կարողության ձևավորում։
- Առակի ենթատեքստը կռահելու կարողության ձևավորում։
- Աշակերտների բառապաշարի ակտիվացում և հարստացում։

Դաստիարակչական՝

- Դաստիարակել միմյանց լսելու կարողություն։
- Դաստիարակել գնահատելու կարողություն։
- Դաստիարակել համագործակցային կարողություն։
- Արժեքային համակարգի ձևավորում։

Զարգացնող՝

- Զարգացնել վերլուծելու, համադրելու, հակադրելու հմտությունները։
- Զարգացնել համագործակցային կարողությունները։
- Զարգացնել երևակայությունը։
- Զարգացնել ստեղծագործական կարողությունները։

Դասի ավարտից հետո աշակերտները կիմանան՝

- ժողովրդական բանահյուսության ժանրերը,
- հատուկ և հասարակ գոյականները։

Դասի ավարտից հետո աշակերտները կկարողանան՝

- գործնականում կիրառել ժանրերը՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները,
- ընտրել և գրառել թեմային համապատասխան առածներ-ասացվածքներ,
- ընդհանուր կապեր գտնել առածի և բնագրի միջև,
- համեմատել տարբեր ստեղծագործությունների բովանդակությունը և հերոսներին,
- թեմատիկ խմբում ընդգրկված ստեղծագործությունները արտահայտել մեկ նախադասությամբ,
- տարբերել հատուկ և հասարակ գոյականները։

Վերջնարդյոունք

- հասկանալով կարդալու կարողությանը,
- գնահատելու կարողությանը,
- տեքստի գաղափարը վեր հանելու կարողությանը,
- վերլուծություններ, համադրություններ անելու կարողությանը։

Դասը վարել ենք ԽԻԿ համակարգով

Դասի ընթացքը՝

Խթանման փուլ (10րոպե)

«Մտքերի տարափ» մեթոդի միջոցով վերհիշում ենք ժողովրդական բանահյուսության ժանրերը։ Գրատախտակի կենտրոնում շրջանի մեջ գրում ենք «Ժողովրդական բանահյուսություն» բառակապակցությունը։ Գծիկներ ենք քաշում այնպես, որ ստացվի արև, այնուհետև յուրաքանչյուր աշակերտ արևի շողերի վրա լրացնում է այն բառը կամ միտքը, որն այդ պահին անցնում է մտքով։ Աշակերտների յուրաքանչյուր պատասխանը գրի է առնվում գրատախտակին։ Աշխատանքից հետո հարցերի միջոցով ամփոփում ենք թեման՝ աշակերտներին ուղղելով հետևյալ հարցերը՝

- Ո՞ր թեման ենք ամփոփում։
- Ի՞նչ առակներ անցանք։

- Ի՞նչ սովորեցինք։
- Ի՞նչ է առակը։
- Մարդկային ինչպիսի՞ հատկանիշներ են ներկայացվում առակներում։
- Ո՞վ է եղել առաջին առակագիրը։
- Ի՞նչ գիտենք նրանց մասին։

Իմաստի ընկալման փուլ (35րոպե, հետո դասամիջոց 5րոպե, որից հետո նորից 25 րոպե)

Իմաստի ընկալման փուլը սկսում ենք «Շրջագայություն պատկերասրահում» մեթոդի միջոցով։ Աշակերտները խումբ առ խումբ (նախօրոք ձևավորած) պատրաստում և փակցնում են իրենց աշխատանքները համապատասխան տեղերում։ Այնուհետև մենք, հերթով մոտենալով, խմբերին հանձնարարում ենք ներկայացնել կատարած աշխատանքները։ Սկզբում խոսքը տրվում է առաջին խմբին, որը ուսումնասիրել և ներկայացնում է հայ առակագիրներին, իրենց գրած առակները (խմբերի կատարած աշխատանքներից հատվածներ ներկայացված են հավելվածում)։

Աշակերտները տեղեկություններ էին հավաքել Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու, Աթաբեկ Խնկոյանի մասին։ Պատրաստել էին պաստառ, որտեղ ներկայացված էր նրանց կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող նյութեր։ Որպես առակ առանձնացրել և ներկայացրել էին Ա. Խնկոյանի «Ագռավն ու աղվեսը»։ Այս խմբի աշակերտները պաստառի մի մասում գրել էին առակի բովանդակությունը՝ ընդգծելով փոխաբերական իմաստ ունեցող բառերը։ Առակը ամփոփել և մեկնաբանել էին «Ջրի բերածը ջուրն էլ կտանի» առածի միջոցով։ Աշակերտները պատրաստել էին 3 պաստառ, որոնցից առաջինում պատկերված էր առակի առաջին մասին վերաբերող նկար, երկրորդում՝ երկրորդ մասին բնորոշ նկարը, իսկ երրորդում՝ գրված էր առակը։ Դասարանը, սկզբում նայելով առաջին նկարին, կցկտուր պատասխաններ էր տալիս և չէր կարողանում կռահել առակը, սակայն երբ բացվեց երկրորդ նկարը, դասարանի մեծ մասը իմացավ և մոտավոր ներկայացրեց բովանդակությունը։ Խումբը հիանալի ելույթ ունեցավ՝ աշխուժացնելով և ներգրավելով ողջ դասարանին։

(դասամիջոց 5 րոպե)

Դասամիջոցից հետո շարունակում է երկրորդ խումբը, որն ուսումնասիրել էր դասագրքերը և գրի առել իրեն դուր եկած առածները՝ կատարելով նկարազարդումներ: Առակները ամփոփել էին առածներով: Աշակերտները ուսումնասիրել էին չորրորդ դասարանի դասագրքերը, առանձնացրել էին և ընկերների դատին էին հանձնել 4 առակ՝

1. Աթաբեկ Խնկոյան՝ «Ճպուռն ու մրջյունը»
2. Եզոպոս՝ «Առյուծն ու մուկը»
3. Վարդան Այգեկցի՝ «Այրի կինը և որդին»
4. Եզոպոս՝ «Առյուծն ու նապաստակը»

Յուրաքանչյուր առակ ներկայացրել էին մեկ առածով՝ ամփոփելով առակի գաղափարը: «Ճպուռն ու մրջյունը» առակի համար ընտրել էին «Ով աշխատանքի, նա կուտի» առածը, «Առյուծը և մուկը» առակի համար՝ »Լավությո՛ւն արա, գցի՛ր ջուրը», երրորդ՝ «Այրի կինը և որդին» առակի համար ընտրել էին «Անազնիվ ճաապարհով եկածը նույն ձևով էլ կգնա» ամփոփ միտքը, որը ակնհայտորեն ցույց է տալիս առակի գաղափարը, չորրորդ՝ «Առյուծն ու նապաստակը» առակը եզրափակել էին « Քչից չկշտացողը շատից էլ չի կշտանա» առածով:

Այս խումբը ներկայացրեց նաև փոքրիկ բեմականցում՝ «Առյուծն ու մուկը» առակի հիման վրա գրած սցենարով: Բեմականացմանը մասնակցում էին խմբի բոլոր անդամները:

Երկրորդ խմբի ավարտից հետո անդրադարձ ենք կատարում լեզվական նյութին: Մենք աշակերտներին բաժանում ենք ծրարներ. ծրարներից մեկում կան թղթիկներ, որոնց վրա գրված են գոյականներ, իսկ մյուս մասում՝ հոգնակիակերտ վերջավորություններ. աշակերտներին հանձնարարում ենք առաջին ծրարից վերցնել եզակի թվով դրված գոյականներ, իսկ երկրորդ ծրարից՝ մասնիկներ, որոնք միացնելով՝ ստանում ենք հոգնակի թվով գոյականներ

Ծրար 1

Քար, տետր, հայրենիք, թուղթ, թռչուն, գիրք, համակարգիչ, աթոռ, սեղան, քանոն, մարդ, առյուծ, աստղ և այլն:

Ծրար 2

-եր, -ներ,- իկ, -ներ, -եր, -եր, -ներ և այլն:

Այս աշխատանքից հետո մենք անդրադառնում ենք հատուկ և հասարակ գոյականներին, աշակերտներին բաժանում ենք քարտեր, որոնց վրա կան նկարներ: Մենք հանձնարարում ենք ընդգծել այն նկարը, որտեղ կա հատուկ գոյական՝ տալով համապատասխան հարցը:

Քարտ 1

Արմեն մատիտ ծառ

Քարտ 2

Երեխաներ թիթեռ Արմինե

Բառային աշխատանքից հետո խմբերը շարունակում են իրենց ելույթը:

Երրորդ խումբը ոգևորված ու ակտիվ ներկայացնում է «Առականի 3» գիրքը:

Ոգևորությունը պայմանավորված էր նրանով, որ պետք է ներկայացնեին իրենց կողմից նոր ստեղծված առակը։ Երրորդ խումբը առակները ուսումնասիրելու համար այցելել էր գրադարաններ, ձեռք բերել առակների ժողովածուներ և իրենց կազմած «Առականի 3» խորագրով գրքում ներառել այն 9+1 առակները, որոնք իրենց բարոյախրատական արժեքով դուր էր եկել։ Դրանք էին՝

1. Վ. Այգեկցի «Առյուծն ու մարդը»
2. Մ. Գոշ «Արջը և մրջյունը»
3. Եզոպոս «Որդիները»
4. Եզոպոս «Աղվեսն ու խաղողը»
5. Վ. Այգեկցի «Այծեր և գայլեր»
6. Ի. Կռիլով «Կարապը, խեցգետինը և գայլաձուկը»
7. Մ. Գոշ « Ոսկին և ցորենը»
8. Ա. Խնկոյան « Վատ ընկեր»
9. Եզոպոս «Գայլերն ու ոչխարները։
10. «Մարդն ու շունը» (հեղ.՝ 3 ՝ դասարան)

Խմբի անդամները շատ գեղեցիկ նկարազարդումներ էին արել ինչպես իրենց գրքի տիտղոսաթերթի համար, այնպես էլ առակներն էին գեղեցիկ նկարազարդել։ Վերջին՝ տասներորդ առակը, որը ներառել էին իրենց դասագրքում, իրենց իսկ կողմից ստեղծված առակն էր։

«Մարդն ու շունը»

Մի մարդ փողոցով անցնելիս նկատում է մի շուն, որը ամբողջովին արյունոտված է լինում։ Տեսնելով շանը՝ խիղճը նրան տանջում է, և նա բերում է շանը տուն՝ պահելու և խնամելու։ Շունն ու մարդը սկսում են միասին ապրել։ Անցնում է որոշ ժամանակ. շունը դրսում խաղալիս ծառի տակից մի սնդուկ է գտնում և սկսում բարձր հաչել։ Մարդը, մտածելով, որ շունը վտանգի մեջ է հայտնվել, արագ հասնում է օգնության, սակայն տեսնելով սնդուկը՝ քարանում է։ Տուն տանելուց հետո այն բացում և տեսնում է, որ մեջը ամբողջությամբ ոսկիներ են։ Այդ տեսնելով՝

մարդը գրկում է շանն ու ուրախանում: Առակը ցույց է տալիս, որ լավությունը միշտ վերադառնում է:

Երրորդ խմբի աշխատանքը ներկայացնելուց հետո կատարվում է ֆիկուլտ դադար:

«Ցո՛ւյց տուր դարձվածքը»

Աշակերտները, ըստ նախօրոք ձևավորված խմբերի, ստանում են մի դարձվածք, և հանձնարարվում է՝ մնջախաղի միջոցով ցույց տան դարձվածքը:

- «Աքլորակռիվ տալ»
- «Ուս ուսի տալ»
- «Քթից այն կողմ չտեսնել»
- «Ձեռք առնել»
- «Խելքը հացի հետ ուտել»

Ապա չորրորդ խումբը սկսում է ներկայացնել իր հանձնարարությունը ավանդությունների շուրջ: Խումբը հետաքրքիր ուսումնասիրություններ էր կատարել. ընտրել էին այնպիսի ավանդություններ, որոնք պարունակում են տեղեկություններ Հայաստանի մասին: Հետաքրքրիր և գովելի էր այն փաստը, որ չէին առանձնացրել Արցախը Հայաստանից. տեղեկություններ էին հավաքել նաև Արցախի մասին: Կատարել էին գեղեցիկ նկարազարդումներ: Պաստառի վրա նշել էին պետությունների դրոշները: Խմբի անդամները աշխատել և ներկայացրել էին հետևյալ ավանդությունները:

1. «Վա՛յ Զոր, Վա՛յ Զոր»
2. «Մասիսի և Արագածի վեճը»
3. «Ինչո՞ւ Արցախ»

Հինգերորդ խումբը ներկայացնում է ժողովրդական բանահյուսության բոլոր ժանրերը: Այս խմբի աշակերտներ փորձել էին ընտրել այնպիսի ստեղծագործություններ, որոնք ծանոթ են եղել նրանց դեռ նախադպրոցական տարիքից: Անդրադարձել էին ժողովրդական բանահյուսության բոլոր տարրերին: Հետաքրքիրն այն էր, որ աշակերտները իրենց աշխատանքի մեջ ներառել էին հայկական ծագմամբ իրենց ծանոթ ստեղծագործությունները: Չէին մոռացել էպոսի մասին:

Ծառը բաժանված էր 14 ճյուղից՝

1. Հեքիաթ
2. Առակ
3. Էպոս
4. Ավանդություն
5. Առած
6. Ասացվածք
7. Օրորոցային
8. Շուտասելուկ
9. Սուտասելուկ
10. Դարձվածք
11. Խաղիկ- տաղիկ
12. Հանելուկ
13. Հաշվելուկ
14. Առասպել

Այս տասնչորս ժանրերին էլ համառոտ, բայց անդրադարձել էին։

Խմբերի կատարումները լսելուց հետո տվեցինք հետևյալ հարցերը։

Կշռադատման փուլ (15րոպե)

- Ի՞նչ դժվարությունների հանդիպեցիք աշխատանքի կատարման ընթացքում։
- Ի՞նչը ձեզ դուր եկավ։
- Ի՞նչը կփոխեիք, եթե հնարավորություն ունենայիք նորից աշխատելու։

Հարցերի քննարկումից հետո մենք, գրատախտակին նկարելով քառաբաժան, ամփոփում ենք կատարած աշխատանքը և հանձնարարում աշակերտներին համապատասխան վանդակում նշել, թե ի՛նչ տեսան, լսեցին, իմացան և ի՛նչը կուզեին փոխել։

Ի՞նչ տեսա	Ի՞նչ լսեցի
Կենդանիներ Անտառ Մխիթար Գոշին	Կենդանիներ ձայները Ընկերներիս պատասխանը

Ի՞նչ իմացա	Ի՞նչ եմ ուզում փոխել
Առակագիրների մասին Ավանդությունների մասին	Կուզենայինք այսպիսի դասեր շուտ-շուտ իրականացնել:

«Քառաբաժան»-ից հետո ես իբրև տնային աշխատանք հանձնարարում եմ գրել «Ի՞նչ ձեռքբերում ունեցա» թեմայով շարադրանք 1 էջի սահմաններում: Իսկ արդեն վերջում յուրաքանչյուր աշակերտ նախ գնահատում է իրեն, հետո՝ մյուսներին, վերջում դրանց գումարելով ուսուցչի գնահատականը՝ միջին է հանվում, և յուրաքանչյուր աշակերտ ստանում է իր գնահատականը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երեխաների ստեղծագործական կարողությունները, հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության ունակությունները զարգացնելու և նրանց սոցիալականացմանը նպաստելու, տրամաբանական, վերլուծական, ճանաչողական և այլ կարողություններ ձևավորելու համար ժողովրդական բանահյուսությունն ուսումնասիրելու գործում առանձնակի կարևորվում են ժամանակակից մեթոդները, մասնավորապես՝ նախագծային-որոնողական աշխատանքների իրականացումը:
2. Նախագծային-որոնողական աշխատանքները մեծապես խթանում են դասարանային և արտադասարանային աշխատանքների, դրանցում տարբեր մեթոդների արդյունավետ համակցումը:
3. Համակարգման, ուսումնասիրության և վերլուծության նախագծաորոնողական աշխատանքները օգնում են վերոնշյալ մեթոդներն ու մոտեցումները նպատակաուղղել աշակերտների համատեղ, թիմային աշխատանքի կազմակերպմանը, հնարավորություն ընձեռում ճանաչողական գործունեության և մտավոր ակտիվության միջոցով բավարարելու տարրական դասարանի երեխաների տարիքային պահանջմունքները:
4. Տարրական դասարաններում նախագծային աշխատանքների ձևով ուսուցման գործընթացի կազմակերպումը արդյունավետ է նաև միջանձնային հատկանիշների դրսևորման առումով, քանի որ այն խթանում է կոլեկտիվ աշխատանքը, մտքեր փոխանակելու, փոխօգնություն դրսևորելու, միմյանց կարծիքը լսելու հնարավորություն տալիս, ինքնագնահատման ու ինքնադրսևորման հմտություններ ձևավորում:

5. Աշակերտների անմիջական մասնակցությամբ նախագծային աշխատանքների մշակումն ու իրականացումը խթանում են նրանց համագործակցային կարողությունների զարգացումը, ապահովում ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ, աշակերտ-ծնող, ծնող-ուսուցիչ համագործակցությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գիտամեթոդական հանդես, Նախաշավիղ, 4, Երևան, 2015:
2. Գիտամեթոդական հանդես, Նախաշավիղ, 1, Երևան, 2010:
3. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, երկրորդ՝ լրամշակված հրատարակություն, Երևան, 2009:
4. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, երրորդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2015:
5. Գյուլամիրյան Ջ., Նախագծային գործունեությունը՝ որպես ապագա դասվարների մանկավարժական հաղորդակցական կարողության զարգացման միջոց. Մանկավարժական միտք թիվ 1, 2, 2009:
6. Նախաշավիղ, գիտամեթոդական հանդես, 5-6, ԿԳՆ ԿԱԻ, Երևան, 2007: